

Նոր շունչ քաղծառայության ոլորտում

ՀՀ Կառավարության նախաձեռնած Պետական Հատվածի Արդիականացման Ծրագրի (ՊՀԱԾ) իրականացրած խոշոր նպատակներից էր մի շարք նորանուծությունների մուտքը ՀՀ Քաղծառայության համակարգ:

«Անշուշտ ՊՀԱԾ ձեռքբերումների կարևոր բաղադրիչներից էին ՔԾԽ-ում իրականացված մի շարք բարեփոխումները: Մասնավորապես աչքի ընկնող ներդրումներից են ՔԾԽ համակարգում Մարդկային Ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգի ներդրումն ու գործարկումը: Ավարտական փուլում է գտնվում քաղաքացիական ծառայության զարգացման ռազմավարությունը: Բացի այդ ստեղծվել են բարենպաստ աշխատանքային պայմաններ՝ վերանորոգվել են մրցութային դահլիճն ու ՔԾԽ-ի վարչական շենքը, ստեղծվել է անհրաժեշտ տեխնիկական միջոցներով հագեցված խորհրդակցությունների, թրեմինգների սենյակ, որը կատարում է նաև տեղեկատվական կենտրոնի գործառույթ, Խորհուրդը և աշխատակազմը համալրվել են գրասենյակային նոր կահույքով ու գույքով», - պատասխանելով մեր այն հարցին, թե ինչ շոշափելի ներդրումներ գրանցեց ՀՀ Քաղծառայության համակարգը ՊՀԱԾ շրջանակներում, նշեց ՀՀ ՔԾԽ նախագահի տեղակալ Սամվել Վասիլյանը:

Այս շրջանակներում քաղծառայողների անձնական գործերը վարելու, ատեստավորման մրցույթների կազմակերպման, պաշտոնի գրանցման և մնացած բոլոր այլ հարցերը լիովին տեսանելի, առավել հեշտ ու պարզ կառավարելի դարձնելու տեսանկյունից նշանակալի էր հատկապես Մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգի ներդրումը քաղաքացիական ծառայության ոլորտում: Այս համակարգը ներառում է քաղաքացիական ծառայության հետ կապված բոլոր գործառույթները, այդ թվում նաև թափուր պաշտոնների համալրումն ու քաղաքացիական ծառայողների ատեստավորումը: Այն հարցին, թե արդյոք ՄԻԿՏՀ-ի ներդրումից հետո շոշափելի՞ են փոփոխությունները մրցույթների ու ատեստավորումների գործընթացները կազմակերպելու և իրականացնելու առումով, ՀՀ ՔԾԽ աշխատակազմի մրցութային և ատեստավորման վարչության պետ Արմեն Ահարոնյանը պատասխանեց. «Անկասկած. ձեռքի բազմաթիվ գործառույթների կատարումն այսօր նվազագույնի է հասցվել, քանի որ տեղեկատվական համակարգը կատարելով համապատասխան հրահանգները, հաշված թույլտվությունների ընթացքում կատարում է տվյալ աշխատանքը, տրամադրում անհրաժեշտ տեղեկատվությունը քաղաքացիական ծառայողներին վերաբերող հարցերի շուրջ: Օրինակ, հենց այս պահին կարող ենք տեսնել՝ հիա քանի թափուր պաշտոն կա, որոնց համար են մրցույթներ հայտարարվել, դրանցից որոնք են կայացել, ինչպիսի արդյունքներ են ունեցել, քանի դիմում է ներկայացված բարձրագույն և գլխավոր խմբերի թափուր պաշտոնների զբաղեցման մրցույթներին մասնակցելու համար, որ մարմինների որ քաղաքացիական ծառայողներն են ենթկա ատեստավորման, երբ է նախատեսված նրանց ատեստավորումը և այլն»:

Բարձրագույն և գլխավոր պաշտոններ զբաղեցնելու նպատակով դիմած բոլոր անձինք, ինչպես նաև արդեն պաշտոնավարող այդ խմբերի քաղաքացիական ծառայողներն իրենց գիտելիքներն ստուգում են մրցույթների և ատեստավորումների համար նախատեսված նորացված դահլիճում: Շուրջ 50 դիմորդի համար նախատեսված դահլիճն ամբողջությամբ նորոգվել ու արդիականացվել է, դարձել հարմարավետ. ձեռք է բերվել նոր հարմարավետ կահույք, որը նախատեսված է նաև համակարգչային եղանակով թեստավորում իրականացնելու համար, ինչն էլ ավելի կնպաստի մրցույթներն ու ատեստավորումներն առանց մարդկային միջամտության անցկացնելուն:

Ըստ պարոն Ահարոնյանի՝ ավտոմատ կառավարվող համակարգը տվյալների միասնական բանկի սկզբունքով ապահովում է դրանց (տվյալների) փոխանակումը ՀՀ

քաղաքացիական ծառայության խորհրդի և ոլորտում ընդգրկված մարմինների միջև: Ի հավելումն դրա, բավականին հեշտացել է տեղեկատվական այս ծրագրից հարցման միջոցով տեղեկություններ գտնելը, վիճակագրություն կամ վերլուծություն կատարելը:

«Կառավարող համակարգում տեղեկատվությունը պաշտպանված է, ինչը ենթադրում է, որ ամեն պատահական մարդ չի կարող մուտք գործել և միջամտել դրա աշխատանքին», - ամփոփում է պարոն Ահարոնյանը:

Սարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգը թույլ է տալիս նաև ավտոմատ կերպով կուտակել քաղծառայողների մասին անհրաժեշտ տեղեկությունները: Այն ամբողջացնում է յուրաքանչյուր քաղծառայողի համար կազմված տեղեկությունների էլեկտրոնային փաթեթները և դրանց հետ կապված ընթացակարգերը դարձնում ավելի հեշտ ու որակով կառավարելի: «Նախկինում անվանացանկի և գրանցամատյանի վարման ողջ գործընթացը ձեռքով էր արվում: Օպերատորական աշխատանքը բավական շատ էր: Հիմա, օրինակ, հենց այս պահին կարող ենք պարզել, թե քաղաքացիական ծառայողների անվանացանկում որքան պաշտոն կա, ինչպիսին է շարժը, քաղաքացիական ծառայողների սեռատարիքային հարաբերակցությունը՝ ընդհուպ ըստ պաշտոնների խմբերի ու ենթախմբերի, կրթական ու մասնագիտական պահանջների ներկայացման միտումները և այլն: Կարող ենք պարզել՝ որքան մարդ և որ հիմքերով են ընդգրկվել կադրերի կարճաժամկետ ու երկարաժամկետ ռեզերվներում: Սակայն որպեսզի այս ծրագիրը լիարժեք կատարի իր ֆունկցիան, այն տեղայնացվում է նաև քաղաքացիական ծառայության համակարգում ընդգրկված բոլոր մարմիններում: Հարկ է հավելել նաև, որ նաև համակարգը ճիշտ գործարկելու նպատակով ուսուցանվել են քաղծառայան ոլորտում ընդգրկված բոլոր մարմինների կադրային ստորաբաժանումների աշխատակիցները», - ասում է ՀՀ ԹԾԽ աշխատակազմի Անվանացանկի և գրանցամատյանի վարման վարչության պետ Գայանե Սաֆարյանը և անմիջապես համակարգչի վրա ցույց է տալիս, թե ինչքան արագ ու հեշտ է դարձել իրենց աշխատանքն այս տեղեկատվական համակարգի ներդրումից հետո:

ՀՀ Կառավարության նախաձեռնած Պետական Հատվածի Արդիականացման Ծրագրի շրջանակներում գործարկվելու է նաև ՀՀ ԹԾ Խորհրդի պաշտոնական պորտալը, որը համակարգի մասին հարուստ տեղեկատվություն պարունակելուց զատ նաև քաղաքացիներին էլեկտրոնային ճանապարհով ծառայություններ մատուցելու հնարավորություն կտա: Օրինակ քաղաքացին թափուր պաշտոնի զբաղեցման մրցույթին մասնակցելու համար ստիպված չի լինի հեռավոր մարզից հասնել մայրաքաղաք, այլ անհրաժեշտ փաստաթղթերը կուղարկի պորտալի միջոցով և կստանա մրցույթին նախապատրաստվելու համար անհրաժեշտ նյութերը:

Բացի դրանից ՊՀԱԾ շնորհիվ ՀՀ ԹԾԽ ՊՈԱԿ հանդիսացող ՀՀ Պետական Կառավարման Ակադեմիայի համար մշակվել են ուսումնական ծրագրեր, 24 վերապատրաստման մոդուլներ, անց է կացվել համապատասխան ուսուցում: Ակադեմիայում վերանորոգվել են լսարանները, ձեռք են բերվել համակարգչային սարքավորումներ, կահույք, էլեկտրական սարքավորումներ, գրադարանը համալրվել է մոտ 700 գրքով:

Այսպիսով, կառավարության նախաձեռնած պետական բարեփոխումների ծրագրի իրականացումը թողնում է իր դրական ազդեցությունը: Պետական կառույցներում աշխատանքը դառնում է ավելի արագ, արդյունավետ ու թափանցիկ: